Հեքիաթ հիմար մկնիկի մասին

Սամուիլ Մարշակ

Երգում էր գիշերը մուկը բնի մեջ.
– Քնիր մկնիկ ու լռիր,
Կտամ ես քեզ համով հաց,
Խոր քուն մտիր ու քնիր:

Պատասխանեց փոքրիկը.
– Քո ձայնը շատ է բարակ,
Լավ է մայրիկ չերգես,
Ու ինձ նոր դայակ բերես:

Վազեց մկնիկ-մայրիկը,
Կանչեց արագ բադիկին.
– Արի՛ մեզ մոտ բադ քույրիկ,
Անուշ քուն փոքրիկին տուն:

Եկավ բադիկն ու երգեց.
– Քնի՛ր մկնիկ, գա-գա-գա,
Անձրևը, որ էլ չգա,
Այգուց ձիձու կբերեմ:

Փոքրիկ հիմար մկնիկը,
Կիսաքնած մրթմրթաց.
– Ո՛չ, քո ձայնը լավը չէ:
Այս ի՞նչ բարձր ես դու երգում:

Վազեց մկնիկ-մայրիկը,
Կանչեց արագ գորտիկին.

– Արի՜ շուտ, գորտ մորաքույր,
Անուշ քուն փոքրիկին տուր:

Սկսեց գորտը լուրջ երգել.
– Կվա՜-կվա՜-կվա՜, պետք չէ լացել:
Քնի՛ր մկնիկ, մինչև լույս,
Կտամ քեզ համով մժեղ:

Փոքրիկ հիմար մկնիկը,
Կիսաքնած մրթմրթաց.
– Ո՛չ, քո ձայնը լավը չէ՛:
Շատ տխուր ես դու երգում:

Վազեց մկնիկ-մայրիկը,
Կանչեց ձիուն, որ օգնի.
– Չի մորաքույր դու արի՜,
Անուշ քուն փոքրիկին տուր:

– Ի-հո՜-հո՜-,- երգում էր ձին,
Քնի՛ր մկնիկ, անուշ-անուշ,
Թեքվիր աջ կողքի վրա,
Կտամ քեզ մի պարկ խոտ:

Փոքրիկ հիմար մկնիկը,
Կիսաքնած մրթմրթաց.
– Ո՛չ, քո ձայնը լավը չէ՛,
Վախենում եմ, մի՛ երգի:

Վազեց մկնիկ-մայրիկը,
Կանչեց արագ խոզուկին.
– Արի՜, արի՜ խոզ քույրիկ,
Անուշ քուն փոքրիկին տուր:

Սկսեց խոզը խռխռացնել,
Եվ փոքրիկին քնացնել.
– Բայո՛ւ-բայո՛ւ, խրյո՛ւ-խրյո՛ւ-խրյո՛ւ:
Հանգստացիր ու քնիր:

Փոքրիկ հիմար մկնիկը,
Կիսաքնած մրթմրթաց.
– Ո՛չ, քո ձայնը լավը չէ՛,
Շատ կոպիտ ես դու երգում:

Մտածեց մայր մկնիկը,
Պետք է կանչել հավիկին:
– Արի՛ հավիկ մորաքույր,
Անուշ քուն փոքրիկին տուր:

Կչկչում էր հավիկը.
– Կուդ-կուդա՜, մի վախիր փոքրիկ մկնիկ,
Մտիր արագ թևիս տակ,
Եվ հանգիստ է և շատ տաք:

Փոքրիկ հիմար մկնիկը,
Կիսաքնած մրթմրթաց.
– Ո՛չ, քո ձայնը լավը չէ՛,
Այսպես քնել չի՛ լինի:

Վազեց մկնիկ-մայրիկը,
Կանչեց գայլաձկանը,
– Արի՛ մեզ մոտ գայլաձուկ,
Անուշ քուն փոքրիկին տուն:

Սկսեց երգել գայլաձուկը,
Բայց մկնիկը չլսեց:
Բացում-փակում էր բերանը,
Կրկին ոչինչ չլսվեց:

Փոքրիկ հիմար մկնիկը,
Կիսաքնած մրթմրթաց.
– Ո՛չ, քո ձայնը լավը չէ՛,
Շատ ցածր ես դու երգում:

Վազեց մկնիկ-մայրիկը,
Կանչեց փամփլիկ փիսիկին:
– Արի՜ փիսիկ մորաքույր,
Անուշ քուն փոքրիկին տուր:

Սկսեց փիսիկը երգել.
– Մյաո՛ւ-մյաո՛ւ, քնիր փոքրիկ:
Մյաո՛ւ-մյաո՛ւ, շուտ պարկենք,
Մյաո՛ւ-մյաո՛ւ, որ քնենք:

Փոքրիկ հիմար մկնիկը,
Կիսաքնած մրթմրթաց.
– Քո ձայնն այնքան անո՛ւշ է,
Շատ քա՛ղցր ես դու երգում...

Վազեց մկնիկ-մայրիկը,
Արագ նայեց անկողնուն,
Փնտրեց հիմար մկնիկին,
Իսկ մկնիկը էլ չկար...

Թարգմանությունը՝
Հ. Հայրապետյանի